


ՆԱՐ - ԴՈՍ

(1867-1933)



ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՍՍԵՆԱԼ

Հեռավոր այդ օրերից մեզ է հասել հուշի մի թանկագին պատահիկ, որը պատմում է ժամանակի կրթական բարքերի և պատանի Միքայելի հիասթափության մասին. «Մայրը Միքայելի հետ գնում է Ներսիսյան դպրոց, մտնում է աշխույժով լի դպրոցի բակը, բարձրանում է դիմացի սանդուղքներից, մոտենում է բաց պատշգամբում պռոռին բազմած հաստ փորով, ձգած կարտուզով (հովարավոր գլխարկ) պարոն Գրիգորին.

- Ներողութիւն, պարոն, որդուս դպրոց ընդունելու համար Ձի՞գ պիտի խնդրիմ,- անվստահ դիմում է Օվսանը

- Հա՛, ինձ պիտի խնդրիս: Ես իմ, որ կամ. համա քո խնդրելուց առաջ որդուդ բան ունիմ ասելու.

- Ասա՛, պարոն, ինչ գուզիս, ասա՛. աչքաբաց տղա է, ինչ էլ որ ուզիս, է՛ն սհաթը ջուղարդ կուտա (նույն պահին պատասխանդ կտա):

- Մոտեցի՛ր, որդի՛ս, մոտեցի՛ր,- կրկնում է պարոն Գրիգորը,- արշինանոց թագբեհը (երկար տերողորմյան) մատների արանքով վեր-վար անելով,- անունդ ի՛նչ է.

- Միքայել Հովհաննիսյան.

- Միխայիլ Օհաննիսյան. Բան չունիմ, լավ անուն է. իժում (ապա) ասա՛, տեսնիմ, էդ կոշիկը, որ հաքիլ իս, ի՛նչ կաշուց է.

Պարոն Գրիգորի հարցը այն աստիճան անսպասելի էր, այն չափի անհիմաստ, որ Միքայելը, այլևս չկարողանալով զսպել իրեն, պոռթկում է.

- Չգիտեմ, պարոն. Թե կարգին բան ունեք, ասե՛ք.»:»:

Այս համարձակ պատասխանից վրդովված՝ քինախնդիր և տխմար պաշտոնյան կտրականապես մերժում է նրան Ներսիսյան դպրոց ընդունել:



ԳՎԱՐՃԱԼԻ ՊՍՏՈՒԹՅՈՒՆ

Արձակագիրը, չափազանց համեստ ու ծանրաբարո մարդ լինելով հանդերձ, երբեմն-երբեմն դառնում էր գվարձախոս և բուն ասելիքն արտահայտում բարեմիտ հումորով: Այս տեսակետից ուշագրավ է լրագրերից մեկում սրբագրիչ-ոձաբանի հաստիքով աշխատող Նար-Դոսի մի ելույթը խմբագրատան դահլիճում: Այնտեղ քննարկվում էր գրաշար բանվորներից մեկի պատմվածքը: Դրա հեղինակը, տարված հեղափոխական կեղծ գաղափարներով, խճողված և ավելորդ բառապաշարով գրել էր շատ անհամոզիչ և ցածրորակ մի գործ: Հուշագիրը պատմում է, որ Նար-Դոսը չէր ցանկանում ելույթ ունենալ՝ հավանաբար չվշտացնելու համար գրական շնորհքից գուրկ բանվորին: Բայց երբ շատ են խնդրում, նա գրական խոտանի մասին իր ասելիքը ներկայացնում է նուրբ ծիծաղով.

«– Ուրախալի է,- ասում է Նար-Դոսը,- որ այսօր քննարկվում է գրաշար-բանվոր Մարտինի «Նավթ ծախող Սիմոնը» պատմվածքը... Ես նրան լավ եմ ճանաչում, վաղուց է գրելու փորձեր անում, բայց խոսելով նրա այս պատմվածքի մասին՝ հեղինակը իր հերոսից՝ Սիմոնից, և՛ նավթն է խլել, և՛ կինը, և՛ կյանքը...

Դահլիճում անսպասելի ծիծաղ է բռնկվում...

– Ինչ վերաբերում է լեզվական-արտահայտչական կողմին, բառերի, մակդիրների գործածությանը,- շարունակում է Նար-Դոսը,- պետք է նկատել, որ ավելորդ բառերը, անտեղի մակդիրները, ցավոք, մեծ տեղ են գրավում. անհրաժեշտ է գիտենալ,- ընդգծում է նա,- որ նախադասության մեջ ամեն մի ավելորդ, անտեղի գործածած բառ կամ մակդիր նման է անտոմս ուղևորի, որին ամեն բոպե տոմս ստուգող վերահսկիչը կարող է օձիքից բռնել և դուրս շարտել...

Դահլիճում վերստին բռնկվում է ծիծաղը... ունկնդիրները աշխույժ ծափահարում են, մի քանիսը՝ սրամտում... Իսկ գրաշար-բանվոր Մարտինը չափազանց գոհ էր, որ իր մասին խոսեց Նար-Դոսը, որ տեղին քննադատեց իր գրվածքը, որ ոսկերիչ-գրողի բերանից իր հասցեին լսեց «հեղինակ» բառը»:

ՆԱՐ- ԴՈՍ - «ԵՍ ԵՎ ՆԱ»

Ինչպես նկատելի է, պատմվածքի գլխավոր հերոսները՝ ԵՍ-ը և ՆԱ-ն, հայտնվելով նույն իրավիճակում, դրսևորում են բարոյահոգեբանական և կամային տարբեր որակներ: Երկուսն էլ սիրո հարցում ստանում են մերժողական նամակներ իրենց սիրելի էակներից: Հատկանշական է, որ Ես-ին հասցեագրված նամակը, որը բաղկացած էր մի բառից («*Ամուսնացա*»), հերոսին ուղղակիորեն դատապարտում է կործանման և բարոյահոգեբանական լքվածության, իսկ Նա-ին նետված նամակի «*ներքև*» և «*վերև*» բառերը նորովի են իմաստավորում ու հիմնահատակ վերափոխում Անտոնիոյին: Կյանքը երբեմն փորձում է ընկճել մահկանացուին: Սակայն հուսահատվում է նա, ով չունի կամքի ուժ: Խոսքն առհասարակ ոչ միայն մեծ հաջողությունների և ձեռքբերումների, այլև դիմացկունության, կամային որակների ձևավորման, ամրացման և զարգացման ունակությունների մասին է: Հնարավոր է, որ Անտոնիոն հանրահռչակ երաժիշտ նույնիսկ չդառնար, բայց նա չէր կարող Ես-ի սման թուլական լինել և կործանել իրեն: